ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
22	կիսաճտքավոր կոշիկներ	ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Կիսաճտքավոր կոշիկ, կաշվե /զինվորի/: Բաղկացած է կոշկերեսի քթամասից, հետևամասից, արտաքին գոտուց, ճտքերից, լեզվակից, փափուկ լեզրակից, հիմնական ներդիրից, մաշվածադիմացկուն ներբանից /տակացուից/ և հանովի-դնովի ներդիրից, ԳՕՍՏ 19137-89-ով նախատեսված կիսաճտքավոր կոշիկներին համարժեք: Քթամասը մշակված է ամբողջական առաջամասեվ և ճտքերի կրնկամասում՝ ամբողջական բարձրությամբ հետնամասի գոտիով: Լեզվակը ամրացված է առաջնամասին և ճտքերին: Բոլոր դետալները իրար միացվում են սոսնձով և կարվում են մաշվածադիմացկուն թելով, որի կարը պետք է թույլ չտա ջրի և խոնավության ներթափանցումը կոշիկի ներսամասի դետալներ: Կիսաճտքավոր կոշիկի երեսացուն պետք է լինի խոշոր եղջերավոր անասունի կաշվից՝ ստացված քրոմային դաբաղման եղանակով, սև գույնի, բարձր որակի բնական մակերեսով /կաշվի մշակումը նախշով /նակատով/ առանց վնասվածքների/, մշակված անջրանցիկ /հիդրոֆոբիկ ծածկույթով: Կաշվի անջրաթափանցելիության աստիճանը դինամիկ վիճակում 2-4 ժամ

			պետք է ապահովվի: Կոշիկը պետք է ապահովի քրտնակլանումը և օդափոխանակությունը, այսինքն՝ օդագոլորշաանցիկությունը և ջերմահաղորդականաությունը:Կոշկերեսի քթամասի և հետնամասի նախշով կաշվի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 2.0մմ, լեզվակը՝ 1.2մմ, իսկ ճտքերը՝ 1.8մմ հաստության, քթամասն ու կրնկամասը՝ կոշտ, կրնկամասի բարձրությունը՝ համաձայն ԳOUS 19137-89 1.3.3 կետի, շեղումները՝ հմաձայն նշված ԳOUS-ի 1.3.5 կետի պահանջներին: Թքամասը և կրնկամասը ներսից մշակվում է թերմոպլաստիկ նյութով, ընդ որում՝ քթամասը 2.0-2.4մմ, իսկ կրնկամասը՝ 2.6-3.0 մմ հաստությամբ /թույլատրելի է երկշերտով, առանց հաշվի առնելու սոսնձի հաստությունը/: Մշակված նյութերը պետք է լինեն այնպիսի հաստությամբ, որ շահագործման ողջ ընթացքում թույլ չտան կոշիկի քթամասի և կրնկամասի դեֆորմացում: Ներբանին ամրացվող հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված, նվազագույնը 2մմ հաստության բնական հումքից՝ պադոշից /խոշոր եղջերավոր անասունի վզակաշի կամ մեջքակաշի/ /վարատոկ, չեպրակ/, ԳOUS-29277 և կոշիկի համար նախատեսված 2.0-2.4 մմ հաստության ստվարաթղթից /ԳOUS 9542/, որոնց միջև դրվում է 11-14սմ երկարության, 0.8–1.2 սմ լայնության և 0.7-1.0 մմ հաստության մետաղական սուպինատոր: Նախշով կաշին քթամասի ներսի հատվածից մշակվում է կաշվե ներդիրով կամ կաբարդին տեսակի կտորով: Նախշով կաշվի քթամասից վերև, հետնամասի արտաքին գոտու ճտքերի և լեզվակի կաշիները ներսից մշակվում են առանց սոսնձման, 1.0-1.5 մմ հաստության բնական ոչխարի կաշվի հումքից /կաշվի երկրորդական շերտով/, համաձայն ԳOUS-940-ի: Ճտքերի վերնամասը երկկողմանի մշակվում է 1.1-1.3 մմ հաստության և 2.0-3.0 սմ լայնության բնական կաշվից, որի միջուկը մշակվում է 5.0-7.0 մմ հաստության, 60±0.5կգ/մ3 խտությամբ սպունգե /պենոպոլիուրետան/ նյութով: Լեզվակը պետք է լինի փակ փականով 1.2-1.4մմ հաստության կաշվից կամ ընդհանուր լեզվակի կաշվից, բարձրությունը՝ ճտքի վերին եզրից ներքև 0.6սմ-ից ոչ ավել: Ճիտքը և

			քթամասը կարակցված են չորս կարով, որի ամրությունը առնվազն 150ն/սմ է: Կրնկամասը, ճիտքն ու հետևամասի արտաքին գոտին կարակցված են 2-4 կարով, որի ամրությունը առնվազն 115 ն/սմ է՝ համաձայն ԳՕՍՏ-9290-ի: Կոշիկի ճտքերի բարրությունը 40-44 միջին չափսի համար 21-23սմ է, մնացած չափսերի շեղումը՝ ± 3մմ: Բարձրությունը չափվում է ճտքի արտաքին մասով, կրնկամասում ներբանի և ճտքի միացման եզրից մինչև ճտքի վերին եզրը: Ճտքի քուղերի անցքերը մշակվում են 7-9 զույգ կոճականցքերով (կախված կոշիկի չափսերից) պատված պաշտպանիչ ներկով, որը կապահովի խոնավ եւ ցածր ջերմաստիճանի ժամանակ կորոզիայից և կկանխարգելի քուղերի սառցակալումը: Թույլատրվում է վերևի հինգ զույգի փոխարեն նաև կեռիկների կիրառում: Քուղերը պետք է պատրաստված լինեն ամուր եւ անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից, որի որակը կապահովի կոշիկի սահուն եւ արագ քուղավորումը, յուրաքանչյուրի վերջույթները (նակոնեչնիկները) թերմոմշակված՝ երկարությունը 1.2-1.6 սմ: Քուղերի երկարությունը առնվազն՝ 170սմ: Ներբանն ամրանում է բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով: Ներբանի խզման բեռնվածությունը բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով ամրացման դեպքում առնվազն 110-120 Ն/սմ է՝ համաձայն ԳՕՍ 21463-87: Ներբանը բաղկացած է 2 մասից՝ ներքին և արտաքին ներբաններից: Ներքին ներբանը պատրաստվում է 2-2.5մմ հաստության ամուր ռետինից, ամրությունը՝ ըստ ՇՈՌԻ 65-70: Ներքին ներբանը երեսամասի և հիմնական ներդիրի հետ կարակցվում է սոսնձման և կարման եղանակով: Արտաքին ներբանը պատրաստված է մաշակայուն պրոտեկտորային ռետինե խառնուրդից, որի ջերմադիմացկունությունը տատանվում են -55C°+ 100C°: Արտաքին ներբանի երկայնակի կտրվածքի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 4 մմ: Ներքին և արտաքին ներբանները իրար հետ կարակցվում են սոսնձման եղանակով, բարձր ճնշման տակ, կարակցման ամրությումը որ պակաս 60 Ն/սմ: Ներբանը գետնին պետք է հպվի հարթ, առանց ճոճվացքի, քթամասի բարձրությունը

			գետնից՝ ոչ ավել 2.0սմ, ներբանը՝ մաշվածադիմացկուն ռետինից։ Տակամասի ստորին հատվածի միջնամասում պետք է դաջված լինի կոշիկի չափսը (թվերով) և նշում մաշվածադիմացկանության վերաբերյալ: Ներբանը պետք է ապահովի չսայթաքելու գործոնը և հետքերի զարդանախշերից ապահովի հնարավորինս արագ ինքնամաքրումը: Բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով ամրացման դեպքում կոշիկի ներբանը պետք է լինի՝ քթամասի հաստությունը՝ առնվազն 15մմ (հետքով), կրնկամասի հաստությունը՝ առնվազն 27մմ (հետքով), հետքի /նախշի/ խորությունը՝ առնվազն 4մմ, արտադրվում է միաձույլ, մաշվածադիմացկուն ռետինից՝ համաձայն ԳՕՍՏ-17311-ի: Հանովի-դնովի ներդիրը պատրաստված է բնական հումքից՝ լավ հարթեցված պադոշից (խոշոր եղջերավոր անասունի մեջքամասի կամ վզամասի կաշվից, ԳՕՍՏ-29277 և ԳՕՍՏ-1903), կոշիկի չափսին համապատասխան, հաստությունը՝ 1.6-2.0 մմ: Լեզվակի արտաքին երեսի վերին հատվածում պետք է դաջված լինի արտադրող կազմակերպության անվանումը, «Արտադրված է ԱԱԾ կարիքների համար, վաճառքն արգելվում է» տեքստը: Կիսաճտքավոր կոշիկների արտադրման համար խստորեն արգելվում է օգտագործել խոզի կաշի: Կիսաճտքավոր կոշիկի աջ ու ձախ զույգը պետք է լինի միևնույն չափսերի, լայնության և կառուցվածքի: Յուրաքանչյուր հանձնված խմբաքանակի համար մատակարարը պարտավոր է ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված կամ հավատարմագրված կազմակերպության կողմից իրականացված կիսաճտքավոր կոշիկների լաբորատոր հետազոտության արդյունքները՝ օգտագործված բոլոր կաշիների հաստության, ինչպես նաև ներբանի խզման բեռնվածության վերաբերյալ: Մատակարար կազմակերպությունը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ քան 7 /յոթ/ օրացուցային օրում պատասխանատու ստորաբաժանմանը պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքատեսակի երկուական զույգ հսկման նմուշներ՝ մատակարարվող տեսականուց (նմուշը պետք է լինեն 41 և 43 չափսի), որոնք պետք է համապատասխանեն տեխնիկական բնութագրում նշված

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ральф Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՇՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		Технические характеристики
	фирменное наименование	наименование производителя	
22			պահանջներին: Մատակարարված ապրանքատեսակի ընդունումն իրականացնելու նպատակով ապրանքատեսակի հսկման (2 զույգ, տարբեր չափսերի) նմուշները ներկայացվում են պատասխանատու ստորաբաժանմանը՝ արտաքնապես և կառուցվածքային համապատասխանությունը հետազոտելու համար: Ներկայացված հսկման նմուշի հետ համատեղ մատակարար կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել կիսաճտքավոր կոշիկի արտադրման համար օգտագործված բոլոր նյութերը՝ ամրացված գծագրական թղթի վրա և դրանց վերաբերյալ որակի հավաստագրերը: Ներկայացված նմուշը ստորագրում է մատակարարը, համաձայնեցնում է ՀՀ ԱԱԾ Տնտվ հետ, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի : Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 36-48 չափսերի: Փաթեթավորումը առնվազն հնգաշերտ ստվաթղթե արկղերով, 1 արկղի մեջ 10 զույգ, արկղերը պետք է լինեն պիտակավորված (նվազագույնը 8սմ*15սմ չափսի), որի վրա պետք է տեսանելի նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, իսկ արտադրման ամիսը և տարեթիվը լրացվում է ձեռքով: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, կրման /շահագործման/ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (8 ամիս), իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը անհատույց փոխարինել նորերով 14 օրացուցային օրվա ընթացքում: Փոխարինման ժամկետը սկսվում է հաշվարկվել պատվիրատուի կողմից գրավոր տեղեկացվելու հաջորդ աշխատանքային օրվանից